Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հոտազոտական աշխատանք

Թեմա՝

Գրիգոր Տաթևացու դերն ու գործունեությունը տարածության և ժամանակի մարդկային չափումների հոլովույթում

Կատարող՝ Ժենյա Մարտիրոսյան

Դպրոց՝ ԵՊԲՀ <<Հերացի>> ավագ դպրոց

Առարկա՝ հայ գրականություն

Կազմակերպություն՝ ,Երևանի Լեոյի անվան N 65 ավագ դպրոց ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

(1346 — 1409), աստվածաբան, փիլիսոփա, ուսուցիչ,

Հայ Առաքելական եկեղեցու վարդապետ

Ճիշտէ, Տաթևացին արդարությունը համարում է աստվածային պարգև, մարդու բնությանը բնորոշ գիծ, այդուհանդերձ բնավ էլ այն կարծիքին չէ, որ մարդու մեջ առանց նրա ցանկության ու կամային ջանքի դա կարող է հաստատվել ու դրսևորվել: Արդարությունը մյուս առաքինությունների նման ձեռքբերովի է: Աստված մարդուն ստեղծել է բարի, արդար, սակայն մարդը պետք է իր կյանքի ընթացքում հոգ տանի, որ դրանք աճեցնի, կատարելագործի և լիարժեք դրսևորի:

Բովանդակություն

Գրիգոր Տաթևացու դերն ու գործունեությունը տարածության և ժամանակի մարդկային չափումների հոլովույթում

1. Սուրբ Գրիգոր Տաթևացին՝ մեծն ուսուցիչ

2. Կենսագրական տեղեկություններ

3. Գր. Տաթևացու գործունեությունը

4. Մանկավարժական հայացքները

5. Միջնադարի մեծ ռաբունապետի գրական ժառանգությունը

6. Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները

7. Հետաքրքիր են Տաթևացու հոգեբանական հայացքները:

8. Գրիգոր Տաթևացու տնտեսագիտական ուսմունքը

9. Գր. Տաթևացին՝ աշխատանքի մասին

10. Տաթևացու պետականամետ դրույթները

11. Աստվածաբան Տաթևացու բարոյագիտական ուսմունքը

12. Գրիգոր Տաթևացին՝ մանրանկարիչ և երաժիշտ



Ներածություն

Հետազոտական աշխատանքի նպատակները-

1. **Ներկայացնել Գրիգոր Տաթևացու մանկավարժական դրույթների (սկզբունքների . տեսակետների) արդիականությունը**.

ա/ Գրիգոր Տաթևացին երեխայի կրթության ու դաստիարակության հարցում կարևոր դեր էր հատկացնում ուսուցչին, որը պետք է լիներ նվիրված, անարատ վարքի տեր:

բ/ Տաթևացին իր մանկավարժական տեսակետներում գտնում էր,որ մարդու ճանաչողության կարևորությունը զարգանում է աստիճանաբար կրթության և դաստիարակության միջոցով: Ըստ նրա՝ երեխային պետք է կրթել շատ փոքր տարիքից՝ նրա մեջ սերմանելով սեր գիտության,

բնության, հոգևոր մաքրության նկատմամբ՝մտավոր կրթությունը ներդաշնակելով աշակերտի ֆիզիկական պատրաստվածության հետ:

գ/ Գրիգոր Տաթևացին դաստիարակել է 300-ից ավել աշակերտների, որոնցից շատերը դարձել են ականավոր գիտնականներ, եկեղեցական գործիչներ, բանաստեղծներ և մատենագիրներ:

2.Գրիգոր Տաթևացու բարոյագիտական ուսմունքի դաստիարարակիչ դերը

ա/ մեծ մտածողը մարդու բարոյական կյանքի կարգավորման գործում մեծ տեղ էր հատկացնում բանականությանը:

բ/ կարևորելով մարդու կյանքում գործնական գիտությունների դերը՝ շեշտում էր այն միտքը, որ առանց բարոյագիտության դրանք չեն կարող կոչվել կատարյալ գիտություններ:

գ/ մարդը բարոյական պատասխանատվություն է կրում ինչպես տիեզերքի, այնպես էլ մյուս արարածների հանդեպ:

դ/ անհատի բարոյական կատարելագործումը Տաթևացին կապում է կրթության ու դաստիարակության, առաքինությունների ձեռքբերման, բարոյականության ավանդական կանոններին, ազգային կրոնական սովորույթներին հետևելու և աշխատանքային գործունեության հետ:

դ/ համազգային նշանակության խնդիրները պետք է կարգավորի ոչ միայն իշխանական դասը, այլև ամբողջ ժողովուրդը:

Եզրակացություն, առաջարկություններ

1. Ընթերցել և քննարկել Գր. Տաթևացու մտքերը

- Անգործությունը բոլոր չարիքների ու մեղսագործությունների մայրն է:
- Հիմարներն ավելի շատ են, քան իմաստունները, որովհետև հիմարների մեջ իմաստուններ չեն լինում, իսկ իմաստունների մեջ հիմարներ՝ ինչքան ուզեք:
- Հայելին արտացոլում է ամեն ինչ, սակայն ոչ մի պատկեր իր մեջ չի խառնում, այնպես և միտքը, արտացոլելով իրականությունն իր բազմազան կողմերով, ոչինչ չի խառնում:
- Բժշկություն իմացողը բժիշկ է, արդարություն իմացողը միշտ չէ, որ արդար է:

Օգտագործված գրականության ցանկ

- Սեյրան Զաքարյան «Գրիգոր Տաթևացու բարոյագիտական ուսմունքը»
- Մաթևոսյան Ա. Ս., «Գրիգոր Տաթևացին և Մեծոփավանքի դպրոցի հիմնադրումը» ,Պատմա-բանասիրական հանդես, 1969, № 2, էջ 146-154:
- Թովմասյան Ն.Ռ., « Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները», Ե., 1966:
- Թահմիզյան Ն., «Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության», ԼՀԳ, N 5, 1971:
- Հակոբյան Հ., Գրիգոր «Տաթևացին արվեստի մասին»

1.Սուրբ Գրիգոր Տաթևացին՝ ուսուցիչ

Սուրբ Գրիգոր Տաթևացին Աստվածաբան էր, փիլիսոփա, եկեղեցական գործիչ,ուսուցչապետ,նկարիչ ու գեղագիր: Գրիգոր Տաթևացին Տաթևի վանքի փիլիսոփայական մտքի առաջավոր թևի նշանավոր ներկայացուցիչներից էր, միջնադարի հայ աստվածաբանական մտքի խոշոր դեմքերից: Նրան ժամանակակիցները մեծարել են Եռամեծ վարդապետ, Երկրորդ Լուսավորիչ հայոց և աստվածաբան, եկեղեցական գործիչ,Վարդապետ ամենայն հայոց և այլ պատվանուններով: Արգասավոր մտածող է եղել, հանրագիտակ աստվածաբան-իմաստասեր, երևելի եկեղեցական գործիչ, անգերազանցելի ճարտասան, մեծահմուտ մանկավարժ, տիեզերալույս վարդապետ և ,կենդանի նահատակ, որի մարդկային ու մտավոր արժանիքները բարձր են գնահատել ոչ միայն ժամանակակիցները, այլև հետագա դարերի հայ մտածողները: Բացառիկ աշխատասիրության ու մեծ եռանդի տեր գիտնականը ապրել է 1346-1409 թթ., երբ Հայաստան աշխարհը անկախության կորստից հետո հայտնվել էր այնպիսի ծանր ժամանակաշրջանում, երբ մշակութային արժեքների պահպանումը և ազգային մտքի զարթոնքի առաջընթացը միայն բացառիկ անհատների մենաշնորհն էր: Այդպիսի անհատ էր Գր.Տաթևացին:

2. Կենսագրական տեղեկություններ

Ծնվել է Գուգարքի նահանգի Թմկաբերդ քաղաք- ամրոցում: Հայրը արհեստավոր էր, Արճեշից էր այդտեղ տեղափոխվել, մայրը ծագումով Փարպի գյուղից էր:Որդու ծնվելուց հետո նրանք տեղափոխվում են Սյունիք, քանի որ այստեղ պաշտպանված էին թաթար-մոնղոլական հորդաներից: Տաթևացին սովորել է Տաթևի վանքում, ըստ Թ. Մոծոփեցու՝ աշակերտել մեծ աստվածաբան և իմաստասեր Հովհան Որոտնեցուն մոտ 28 տարի, եղել նրա ամենամտերիմ աշակերտը և անձնական քարտուղարը: Նրանից է ստացել վարդապետական իշխանությունը Երզնկայում, իսկ ծայրագույն վարդապետական գավազանը՝ 1388թ. Ապրակունիսում: Իր ուսուցչի հետ Տաթևացին գնում է Երուսաղեմ, ճանապարհին՝ Սեպուհ լեռան մոտ, ձեռնադրվում է, անվանվում Գրիգոր, քանի որ այդ տեղը կապված էր Գրիգոր Լուսավորչի հետ:

3. Գր. Տաթևացու գործունեությունը

Ուսուցչի մահից հետո նա գլխավորել է Տաթևի և Ապրակունիսի բարձրագույն դպրոցները,վարել փիլիսոփայության, աստվածաբանության քերականության երաժշտության տեսության և այլ դասընթացներ: Դասախոսել է Մոծոփավանքի և Սաղմոսավանքի դպրոցներում: Միաժամանակ զբաղվել է ազգային- եկեղեցական հարցերով, պայքարել կաթոլիկ քարոզիչների դեմ՝ պաշտպանելով հայ եկեղեցու ինքնուրույնությունը: Նրա ուսուցչապետության օրոք Տաթևի դպրոցը վերածվել է համալսարանի, հասել իր ծաղկման գագաթնակետին՝ դառնալով գիտության, մշակույթի, արվեստի, հոգևոր կյանքի կենտրոն: Իր դպրոցում նա սովորեցնում էր իր իմացածը.այն է՝ հայոց գրականություն, Հին և Նոր Կտակարանների մեկնություն, սուրբ հայրերի գրվածքները,,արտաքին իմաստասիրացն ե , Պլատոնի, Արիստոտելի,Պորփյուրի գրվածքները: Բացի այդ՝ աշակերտներին վարժեցնում էր նաև երաժշտության, ճարտասանության և գրչության արվեստներին: Կարճ ժամանակում նա իր շուրջն է հավաքում Սյունիքից ու Հայաստանի տարբեր շրջաններից այստեղ եկած մոտ 300 աշակերտների, որոնցից Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին, Մատթեոս Ջուղայեցին նույնպես նշանակալի դեր են խաղացել հայ հոգևոր -եկեղեցական, գիտության, մշակութային և հասարակական կյանքում:<<Արտաքուստ էլ բարետես է եղել Տաթևացին, այնպես որ երբ ամեն կողմից աշակերտելու էին գալիս նրա մոտ,- ասում է Առաքել Սյունեցին,- ,նախ ի տեսն

ուրախանային և ապա խօսիւքն ցնծայինե: Հետագայում նրա աշակերտները ցրվել են Հայաստանի տարբեր դպրոցների, վանական կենտրոնների միջև, շարունակել իրենց ուսուցչի

գործը:



4. Գր. Տաթևացու մանկավարժական հայացքները

Տաթևացին իր մանկավարժական հայացքները ներկայացրել է ,Սահմանադրություն դաստիարակությանե աշխատության մեջ,որը բացառիկ երևույթ էր հայ միջնադարյան մանկավարժական գրականության մեջ: Նա գտնում էր, որ գիտելիքներն ու առաքինությունը բնածին չեն, այլ ձեռքբերովի, իսկ զգայական առողջ ընկալումը ճանաչողության հիմքն է, որի վրա էլ հենվում է բանականությունը: Դրա համար էլ նա երեխայի կրթության ու դաստիարակության հարցում կարևոր դեր էր հատկացնում ուսուցչին, որը պետք է լիներ նվիրված, անարատ վարքի տեր: Տաթևացին իր գործը կատարում էր դժվար ժամանակներում, երբ ,ոչ գոյը անդորրութիւն և ոչ հանգիստ խաղաղութեան վասն անօրինակ չարութեանե : Սկզբում Դողթավուշ խանը ավերեց Սյունյաց աշխարհը, հետո՝ Լենկթեմուրը երկու անգամ: Այդ ժամանակ վարդապետները փախել են Սաղմոսավանք, ուր դասավանդել է Տաթևացին,հետո նորից տեղափոխվել Տաթևի վանք: Ահա իր ժամանակի մեծ վարդապետը, չնայելով դժվարություններին, անվհատ շարունակել է իր ուսուցչական գործունեությունը՝ եռանդով պարապելով բազմաթիվ աշակերտների հետ, որոնք իրենց ուսուցչի հետ աստանդում էին: Տաթևացին պայքար է մղել կաթողիկոսական աթոռի տեղափոխության համար: Որպես հեռատես քաղաքագետ՝մեծ աշխատանք է տարել այդ ուղղությամբ. հավաքել է նշանավոր վարդապետների և եկեղեցական ժողով գումարել, հեռավոր վայրերից մի խումբ վարդապետներ ու եպիսկոպոսներ գրավոր թղթով իրենց համաձայնությունն են տվել:Նա նույնիսկ նամակ է գրել Սիս քաղաքի կաթողիկոս Հակոբ 3-րդին ՝նշելով տեղափոխման անհրաժեշտությունը:Կաթողիկոսական աթոռը Սիս քաղաքից տեղափոխվում է Վաղարշապատ:

5. Տաթևացու գրական ժառանգությունը

Տաթևացին գրել է մեկնություններ, լուծմունքներ, քարոզներ, աստվածաբանական, դավանաբանական, իմաստասիրական մեծարժեք աշխատություններ: Այդ երկերում արծարծվել են հեղինակի մանկավարժական հայացքները, ճանաչողության և իմացության խնդիրներ:



ՀԱՄԱԲԱՐԲԱՌ (2011-2013թ.)

Բոլոր նրանք, ովքեր որևէ առիթով գրել են Տաթևացու մասին, հատկապես նրա ժամանակակիցները, հիշում են նրան բազմապիսի մեծարող մակդիրներով՝ քաջ հռետոր, բանիբուն վարդապետ, եռամեծ, արեգակ պայծառ, մեծ ռաբուն, տիեզերալոյս, երիցս երանեալ, բազմերախտ հայր, երկրորդ արփիաւորիչ Հայկազեան սեռի, պայծառամիտ, հանճարեղ եւ այլն:

Հրաչյա Աճառյանը, գնահատելով այդ աշխատանքը, գրել է. ,Անհրաժեշտ է ունենալ մեսրոպյան հայերենի ամբողջական համաբարբառը, ուր լեզվի բոլոր օրինակները մանրամասն հավաքված ու դասավորված լինեն: Վիեննայի Մխիթարյանները կազմել են այդ աշխատությունը, բայց դա գտնվում է միայն իրենց մոտ ձեռագիր վիճակում, որովհետև այդպիսի ահագնածավալ աշխատություններ անհրապարակելի ենե:

Մեր կողմից, հրապարակված ,Գիրք հարցմանցե-ի Համաբարբառի քառահատորը այդ բացը լրացնելու փորձերից մեկն է: Համաբարբառի հրատարակությունից հետո պարզ դարձավ, որ ,Գիրք հարցմանցե-ի բառապաշարը չներառելու հետևանքով ,Նոր բառգիրք Հայկազեան լեզուիե երկհատորյակից դուրս են մնացել գրեթե չորս հարյուր հինհայերենյան բառեր:

Շատ հարուստ է Գրիգոր Տաթևացու թողած գրական ժառանգությունը: Նա թողել է 20-ից ավելի ստվարածավալ ստեղծագործություններ՝ մեկնություններ, քարոզներ, աստվածաբանական-դավանաբանական, իմաստասիրական մեծարժեք աշխատություններ: Առավել կարևոր են ,Գիրք հարցմանցե ու ,Ոսկեփորիկ ե հանրագիտական երկերը,որտեղ ի մի են բերված ոչ միայն ժամանակի գիտությանն ու կյանքի բազմազան խնդիրներին վերաբերող տեղեկություններ,այլև հայ դավանաբանական մտքի դարավոր ձեռքբերումները: Իր տեսակի մեջ բացառիկ է նաև ,Քարոզգիրքը՝ ,Ձմեռանե և ,Ամառանե հատորներով: Այն եղել է քարոզագիտությա,ն, հռետորական արվեստի դասագիրք, որտեղ կարևորվել է քարոզը: Քարոզների բովանդակությունը շատ բազմազան է բարոյակրթության և ուսուցական ուղղությամբ: Խոսվում է ոչ միայն սիրո, խոհեմության, արիության և գործի,եկեղեցու խորհուրդների մասին, այլև քնի, ,հալալ ամուսնությանե, ,վասն արդար վաճառաց ու կշռոցե մասին: Տաթևացու ,Քարոզը փոխարինել է հին ճառին և ներբողյանին: Առաքել Սյունեցին, չափազանց գովելով իր մեծ վարդապետ Գրիգորին, անվանում է նրան ,մեծ հռետորե, ,քաջ հռետորե, ,հոգեշարժ լեզվի տերե:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ
ՆԵՐԲՈՂՅԱՆ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒՆ

Գրիգոր Տաթևացու <<Ներբողեանը>>՝ փոքրիկ մի գործ, որ գրվել է ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու մահվան կապակցությամբ, անկասկած մի նոր երանգ է ավելացնում միջնադարյան գեղարվեստական գրականության ներկապնակում:

6. Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները

Ըստ Տաթևացու՝փիլիսոփայության ուսումնասիրման բնագավառը բնությունն է , իսկ աստվածաբանությունը հավատի տիրույթում է: Անկարելի է մեկը մյուսի մեջ ներթափանցումը, քանի որ հավատն անզոր է բնությունն ընկալելու գործում,գիտությունն էլ իր հերթին անկարող է միջամտել հավատի խնդիրներին: Լինելով իդեալիստ՝նա աշխարհը արարչագործության պսակ էր համարում: ,Աստված է սկիզբն ամեն գոյությանցե: Ըստ նրա՝ Աստծու ստեղծած չորս հավերժական տարրերը՝ հուրը, օդը, ջուրը և հողը, բնության գոյության հիմքն են: **Տաթևացին իր մանկավարժական տեսակետներում գտնում էր,որ մարդու ճանաչողության կարևորությունը զարգանում է աստիճանաբար կրթության և դաստիարակության միջոցով: Ըստ նրա՝ երեխային պետք է կրթել շատ փոքր տարիքից՝ նրա մեջ սերմանելով սեր գիտության, բնության, հոգևոր մաքրության նկատմամբ՝մտավոր կրթությունը ներդաշնակելով աշակերտի ֆիզիկական պատրաստվածության հետ:** Պաշտպանելով բոլոր մարդկանց հավասարության հումանիստական գաղափարը՝ Տաթևացին պաշտպանում է հասարակության կառուցվածքի և գործառության վերաբերյալ օրգանիստական տեսությունը, ըստ որի՝ ինչպես մարդկային օրգանիզմի ամեն մի անդամ կատարում է իրեն վերապահված անփոխարինելի դերը, այնպես էլ հասարակական օրգանիզմի մեջ յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր խավ կատարում է ընդհանուր բարիքին միտված որոշակի գործառույթ: Նրա կարծիքով Աստված մարդկանց ստեղծել է ոչ թե իրար թշնամի, այլ բարեկամ, իսկ նրանց միջև անվստահության, ատելության ու թշնամության հարաբերությունները առաջանում են այն պա- 172 հից, երբ մարդիկ խախտում են աստվածային, բնական ու մարդկային օրենքները: Տաթևացու համար հասարակությունը գործառում է ոչ միայն սոցիալական, այլև բարոյական օրենքներով, տվյալ դեպքում՝ քրիստոնեական բարոյականության պատվիրաններով, ուստի նա պահանջում է հասարակական ու ազգային կյանքում, առհասարակ կառավարման ոլորտում առաջնորդվել այնպիսի բարոյական չափանիշներով ու արժեքներով (հավասարություն, մարդասիրություն,

խաղաղասիրություն, հնազանդություն, արդարություն, չափավորություն և այլն), որոնք կապահովեն հասարակության տարբեր:

Ժամանակի գծային ըմբռնումը չի խանգարում մարդու կյանքը նմանեցնելու անիվի: Անիվ են մարդու հասակը, ժամանակի պտույտը, մարդու բնությունը, անիվ է նաև մարդու կյանքի ընթացքը, սակայն, միշտ առաջ ընթացող անիվ. ,Դարձեալ զի անւոյ նման եմք մեք: Նախ որպէս անիւն մի՛շտ հոլովելով յառաջ ընթանայ, և յետս ոչ դառնայ. այսպէս և մեք միշտ ընթանամք ի ճանապարհ կենցաղոյս ի հանդերձեալն...ե228: Մարդը սայլի անիվի նման ունի երկու ակ՝ հոգի և մարմին, և դրանց միացնող մի սռնի՝ շունչը, իսկ միտքը հանդես է գալիս որպես դրանց ղեկավար և դատավոր: Երբ անիվը ընկնում է փոսի մեջ, այլևս չի շարժվում, այնպես էլ մարդը այս կյանքում շարժվում է աջ ու ձախ, իսկ երբ հասնում է ,ի գուբ գերեզմա նինե, դադարում է շարժվել:

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ

Գրիգոր Տաթևացու ,Գիրք հարցմանցե-ը (1397 թվական) Ս.Գրքի երբևիցե գրված ամենահամակողմանի մեկնությունն է: Այն շուրջ 300 տարի անց միայն՝ 1729 թվականին լույս ընծայվեց Կ.Պոլսում, և շուրջ 300 տարի անց էլ հրատարակվում է նրա աշխարհաբար թարգմանությունը:

Շուրջ երկու տասնամյակում միայն ավարտին հասցված այս շարադրանքում հայ եկեղեցու մեծ նվիրյալը կատարել է անհավանական հսկայածավալ, այսօր արդեն կոթողային համարվող աշխատանք՝ ի մի բերելով Աստվածաշնչի հայտնի բոլոր մեկնությունները, վերլուծելով դավանաբանական վեճերն ու դրանց դրդապատճառները, և որ ամենակարևորն է՝ **ապացուցելով հայոց եկեղեցու ընթացքի ճշմարիտ լինելը:**

Գիրքը նախատեսված է աստվածաբանության, բանասիրության, հայագիտության մասնագետների, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար:

Հայկազյան ազգի երկրորդ լուսավորիչ, Սուրբ Գրիգոր Տաթեւացու գիտական ժառանգության մեջ նշանակալից տեղ է զբաղեցնում ,Գիրք հարցմանցե-ը, որ գրվել է 1397 թվականին:

Այն Սուրբ Գրքի երբեւիցե ամենահամակողմանի մեկնությունն է:

Միայն 300 տարի անց՝ 1729 թվականին երկը լույս ընծայվեց Կ. Պոլսում: Եվ շուրջ 300 տարի անց էլ հրատարակվեց ,Գիրք հարցմանցե-ի աշխարհաբար թարգմանությունը:

Գրեթե երկու տասնամյակում ավարտին հասցված այդ շարադրանքում հայ եկեղեցու մեծ նվիրյալը կատարել է անհավանական հսկայածավալ, այսօր արդեն կոթողային համարվող աշխատանք՝ ի մի բերելով Աստվածաշնչի հայտնի բոլոր մեկնությունները, վերլուծելով դավանաբանական վեճերն ու դրանց դրդապատճառները, եւ որ ամենակարեւորն է՝ ապացուցելով հայոց եկեղեցու ընթացքի ճշմարիտ լինելը:

Սուրբ Գրիգոր Տաթեւացու հետեւյալ տողերն իր գրքի վերաբերյալ, որ տեղ է գտել ,Գիրք հարցմանցե-ի հիշատակարանում. **,Եվ ես բազմաթիվ պտուղներ հավաքող մշակի նման, իբրեւ անուշահոտ բազմերանգ ծաղիկների մի փունջ, կամ իբրեւ փոքրիկ թռչնի՝ մեղվի, մեղրահաց, կամ իբրեւ տառապալից կյանքով (ապրող) այրու մանրադրամ, Ձերդ մեծության՝ իմաստասեր եւ ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցու եւ ընթերցասեր մտքերի ճոխ գանձարանը տուրք ընծայեցիե:**

7. Հետաքրքիր են Տաթևացու հոգեբանական հայացքները:

Ըստ նրա՝ մարդու հոգին ծննդից հետո նման է լվացված մագաղաթի կամ մաքուր տախտակի: Շրջապատող միջավայրը ճանաչելով՝ մարդ լցնում է այդ մագաղաթը, որը դառնում է իր մտքի ու հոգու բովանդակությունը: Սա հետաքրքիր տեսություն է: Միջնադարի փիլիսոփաները փորձին մեծ նշանակություն էին տալիս, ինչպես Հովհաննես Սարկավագը: Այդ տեսությունը իր շարունակությունը գտավ նաև Տաթևացու գործերում: Հասարակական-քաղաքական հայացքներով նույնպես Տաթևացին հանդես է եկել որպես ինքնատիպ մտածող: Տաթևացու հայացքները արդիական են: Նա առանձնանաում է իր վարքի սրբությամբ: Վկայություններ կան, որ նրա մոտ գալիս էին շատ այլադավաններ, իսլամի հետևորդներ, մահմեդականներ, զրուցում հավատքի մասին, դարձի գալիս ու մկրտվում: Բացառիկ է նրա ,«Ընդդեմ տաճկացե» գործը, որով նախանշում է այն ապագա վտանգը, որ գալու էր Հայաստան: Այդ խնդիրը կար դեռևս արաբների ժամանակ, բայց եկեղեցին ու պետությունը բավականաչափ հզոր էին, որ հակահարված տային արաբական մշակույթին, մահմեդական գաղափարախոսությանը և կրոնին ընդհանրապես: Բայց 14-16 –րդ դարերում, որոնք պատմության մեջ բնութագրվում են խավար դարեր, ապագա վտանգը լինելու էր մահմեդականությունը `ըստ Տաթևացու:

9. Գրիգոր Տաթևացու տնտեսագիտական ուսմունքը

Գրիգոր Տաթևացին, լինելով բնատնտեսության ժամանակաշրջանի մտածող, տնտեսության կազմակերպման հարցերը քննարկել է նախ և առաջ ապրանքների սպառողական արժեքի ստեղծման տեսանկյունից՝ դրանք դիտարկելով որպես մարդկանց պահանջմունքները բավարարելու միջոց:

Տաթևացին նյութական պահանջմունքների և բարիքների մեջ առանձնացրել է երկու խումբ՝

1. առաջնակարգ պահանջներ բավարարող բարիքներ, որոնք եթե լինեն մարդը կապրի, իսկ եթե չլինեն՝ մարդը կմեռնի.
2. զարդարանքի և վայելչության առարկաներ, ինչպիսին արծաթն ու ոսկին են, որոնք մարդու համար կենսական նշանակություն չունեն, օտար են մարդու բնական պահանջներին, քանի որ ոչ ուտելիք են, ոչ ըմպելիք, ոչ էլ մերկությունը ծածկող հագուստ:

Սակայն Տաթևացին ոսկու ու արծաթի նշանակությունը գնահատում է ոչ միայն ընդունելով այն, որ դրանք կենսականորեն անհրաժեշտ չեն, այլ բավարարում են մարդկանց զարդարանքի, վայելչասիրության պահանջը և առանձնահատուկ են նրանով, որ ի տարբերություն սովորական ապրանքների, դրանցից հագեցում չկա:

8. Գր, Տաթևացին աշխատանքի մասին

Տաթևացին իր աշխատություններում հիմնավոր ուսմունք է ստեղծել աշխատանքի և դրա առանձնահատկությունների, աշխատանքի հասարակական բաժանման և արտադրության ճյուղերի դասակարգման, հասարակական արտադրության կազմակերպման վերաբերյալ: Նախ, Տաթևացին աշխատանքը համարել է մարդու կյանքի ու գործունեության պայմանը: Տաթևացին աշխատանքը համարել է մարդու ամենամեծ բարեմասնությունը, որով և մարդը տարբերվում է կենդանական աշխարհից:

10. Տաթևացու պետականամետ դրույթները

Գրիգոր Տաթևացին բացառիկ երևույթ է ոչ միայն մեզ ավանդած իր ծանրակշիռ հոգևոր ժառանգությամբ, իր համընդգրկուն մտքի խիզախումներով, իմաստասիրման հավաքաբանական ոճով, ազգային և օտար ավանդույթները համադրելու հմտությամբ, այլև արդյունավետ և նպատակասլաց ազգասիրական գործունեությամբ, ազգային արժեքների ու կրոնական ինքնության պահպանության ուղղությամբ կատարված մեծածավալ արդյունավոր աշխատանքով:

Հայոց պետականության կործանման համար նա մեղադրում էր նախարարներին, որոնք իրենց եսամոլությամբ ընդունակ չեղան լուծելու ազգային խնդիրները: Համոզված էր, որ համազգային նշանակության խնդիրները պետք է կարգավորի **ոչ միայն իշխանական դասը**, **այլև ամբողջ ժողովուրդը:**

11. Գրիգոր Տաթևացու բարոյագիտական ուսմունքը

Իբրև քրիստոնյա մտածող՝ Տաթևացին իր երկերում քննարկում է ինչպես բարոյագիտական ավանդական հարցեր (կյանքի իմաստ, արդարություն, կամքի ազատություն, բարի ու չար արարքներ, մահ, անմահություն, երանելի կյանք և այլն), այնպես էլ աստվածաշնչյան ծագում ունեցող այնպիսի բարոյական երևույթներ (նախախնամություն, մեղք, ապաշխարում, զղջում, հատուցում, առաքինություն, սեր, իմաստություն, գթասրտություն, ողորմածություն, հանդուրժողականություն, հատուցում և այլն), առանց որոնց անկարելի է պատկերացնել միջնադարյան մտածողի բարոյագիտական ուսմունքը: Բացի դրանից՝ Տաթևացու փիլիսոփայական-մարդաբանական, այնպես էլ բարոյափիլիսոփայական հայացքները խարսխվում են նաև անտիկ (պլատոնյան, արիստոտելյան, ստոիկյան, նորպլատոնական) բարոյափիլիսոփայական որոշ գաղափարների վրա, որոնք, սակայն, մեկնաբանվելով քրիստոնեական կրոնի համատեքստում, ձեռք են բերում գործառութային բոլորովին այլ բովանդակություն ու ուղղվածություն: Ընդհանուր առմամբ Տաթևացու բարոյագիտական ուսմունքն ունի բանապաշտական (ռացիոնալիստական) բնույթ, որովհետև մարդու բարոյական կյանքի կարգավորման գործում մեծ տեղ է հատկացվում բանականությանը, տեսական ու գործնական գիտություններին:

Դիտարկվենք Գրիգոր Տաթևացու բարոյագիտական ուսմունքին առնչվող այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են.

ա) տիեզերքում մարդու կարգավիճակին, նրա բնությանն ու էությանը, հատկություններին ու գործառույթներին, արարչակարգում նրա տեղին ու դերին, արարածների նկատմամբ բարոյական պարտավորություններին,

բ) մարդու անձնիշխանությանն ու ազատ ընտրությանը, բանականության և կամքի, աստվածային նախախնամության և մարդու ազատության հարաբերակցությանը,

գ) չարիքների գոյությանը, բարու և չարի հարաբերակցությանը, չարիքների գոյությունը արդարացնող փաստարկներին,

դ) մեղքերին ու առաքինություններին, արդարությանը, բարոյական գործելակերպին,

ե) երկրային կյանքի նկատմամբ վերաբերմունքին, փրկությանը, մահվանն ու հարությանը և երանելի կյանքին:

ա)Մարդու կարգավիճակի բացառիկությունը պայմանավորված է նախ և առաջ այն բանով, որ Աստված տիեզերքը՝ երկինքը, երկիրը, արարածները, ստեղծել է մարդու համար, արարված մյուս գոյացությունները, այդ թվում՝ հրեշտակները, կոչված են ծառայելու մարդուն: Մարդը աստվածային արարչագործության գլուխգործոցն է, արարված տիեզերքի տիրակալը, կատարյալ ու ներդաշնակ բնություն ունեցող մի էակ, առանց որի գոյության կիմաստազրկվեր արարչագործության խորհուրդը: Մարդը տիեզերական էակ է այն իմաստով, որ լինելով համընդհանուր տան տերն ու տիրակալը՝ պատասխանատու է տիեզերական ներդաշնակության, արարված տեսակների՝ մի կողմից իրեն դաշնակից ու բախտակից, մյուս կողմից՝ իրեն ենթակա բոլոր գոյերի պահպանության համար: Տաթևացին,համեմատելով Աստծուն մարդ արարածի հետ, տարբերակում է նույնություն և նմանություն եզրերը: Աստված մարդասեր է, ողորմած, գթասիրտ, ներող, կարեկցալ, հանդուրժող, ուստի մարդուն նույնպես օժտել է համանման հատկություններով և պատվիրել լինել մարդասեր, առաքինի, բարեպաշտ, գթասիրտ, կարեկցող:

Մարդու կազմվածքը նման է նաև աշխարհի կառուցվածքին. մարդու գլուխը նման է կլոր երկնքին, իսկ աչքերը լուսատուներին, որոնք գտնվում են բոլորից վեր: Տաթևացու կարծիքով մարմնի այդպիսի կառուցվածքը ունի բարոյախրատական խորհուրդ. դրանով Աստված մարդանց սովորեցնում է բարեկարգություն, ,պատիւ առ վերինը և առ ներքինը և առ հաւասարը:

բ) ,Մարդոյն է զանազանել զբարի և զչար. և փախչիլ ի չարէ, և երթալ զհետ բարւոյն…ե: Իբրև բարոյական էակ՝ մարդը ի վիճակի է կատարելագործելու սեփական բնությունը, կարգավորելու իր գործունեությունն ըստ ,կանոնաց բանականիսե: Տաթևացու կարծիքով ,մարդոյս միայն է կարգ կանոնաց, բնութեան, կամաց, և հարկի, իսկ անասնոց միայն բնութեան էե38: Մարդուն բնորոշ է ծիծաղելու, խղճալու, գթալու, կարեկցելու, ողորմելու, մեղանչելու, ամաչելու, սիրելու և այլ զուտ մարդկային հատկություններ ու զգացմունքներ: Մարդուն բնորոշ են նաև գնահատելու ու իմաստավորելու, տգեղը զանազանելու գեղեցիկից, կեղծը՝ ճշմարիտից, չարը՝ բարուց և այլ կարողություններ: : Մարդու հասարակական էությունը դրսևորվում է աշխատանքային գործունեության մեջ: : Մարդու աշխատանքը ունի գիտակցական և նպատակասլաց բնույթ: Մարդը ստեղծագործող, աշխատանքային գործիքներ պատրաստող էակ է, ուստի ,մարդոյս միայն է հնարագէտ գործք և արուեստք զանազանե: Թեև մարդը տիեզերական էակ է, սակայն նրա կենալու տարածությունը սահմանափակվում է երկրի շրջանակներում, ավելի ստույգ՝ իր գոյության միջոցների հայթայթման կենսաշխարհում, իր նմանների շրջապատում, հասարակության մեջ, ուստի նա այդ առումով գերազանցապես հասարակական-քաղաքական էակ է: Տաթևացին, հենվելով այս հարցի մեկնաբանության պլատոնարիստոտելյան և քրիստոնեական ավանդույթների վրա, կարծում է, որ մարդու ֆիզիկական-անատոմիական կառուցվածքը, մարմնական ու մտավոր հատկությունները արդեն իսկ ցուցանում են, որ նա նախատեսված է

հասարակական համատեղ կյանքի համար, որ մարդը ինքնաբավ էակ չէ, այլ ունի այնպիսի բնություն, որ չի կարող առանց ուրիշ մարդկանց գոյատևել: Աստված մարդուն ,միտումնավորե է ստեղծել կարիքավոր, նախ, որ նա լինի խոնարհ և համեստ, իմանա իր տեղն ու դերը և առաջին մարդու պես հպարտությունից չկործանվի, երկրորդ, որ իմանալով իր չափն ու հնարավորությունները և տեսնելով իր հոգու ու մարմնի պակասություններն ու կարոտությունները՝ սիրով լցվի առ Աստված և ,ի նմանէ խնդրեսցուք զլցումն բարութեանե, երրորդ, որ ոչ թե մարդը մնա անգործունյա և պարապությունից ու ծուլությունից գործի մեղքեր, ինչը, օրինակ, բնորոշ է բռնավորներին ու իշխաններին, այլ հանապազ աշխատանքով ձեռք բերի իրեն անհրաժեշտ բաները, չորրորդ, որ մարդը իր խելքով, շնորհքով, հմտություններով ու հնարամտություններով ստեղծի այն ամենը, ինչ ինքը չի ունեցել ի բնե. ,Արար զմեզ կարօտս և մերկս ի բնական զգեստուց և զինուց և կերակրոց և տանց բնակութեանց, հինգերորդ, որ մարդը ունենա ուրիշ մարդկանց հետ հաղորդակցվելու, համագործակցելու, համերաշխ ու խաղաղ ապրելու պահանջմունք:

Եթե ընդհանրացնենք այս հարցի վերաբերյալ Տաթևացու բերած փաստարկները, ապա կարելի է ասել, որ հասարակական-քաղաքական էակներ լինելու և ,առ միմեանս կարօտութեանե գլխավոր պատճառը, որ անհրաժեշտ է դարձնում մարդկանց համաբնակությունն ու միավորումը, գոյության միջոցների հայթայթումն ու առաջնային կենսական պահանջմունքների բավարարումն է: Կարիքը մարդկանց հարկադրում է միավորվել, կազմակերպել համատեղ գործունեություն, միասին պայքարել դժվարությունների ու աղետների դեմ, դրանով իսկ հող ստեղծում՝ բացառելու կամ նվազագույնի հասցնելու մարդկանց միջև թշնամական հարաբերությունները:

Թեև Աստված մարդկանց ստեղծել է ,կարիքավորե, որ նրանց միջև անհրաժեշտաբար հաստատվեն մտերմության, վստահության ու եղբայրության հարաբերություններ, սակայն կյանքում ավելի հաճախ կարելի է տեսնել դրանց հակառակ հարաբերությունները:

Տաթևացու բարոյափիլիսոփայական հայացքների հիմքում ընկած է բանականությամբ և կամքի ազատությամբ, անձնիշխանությամբ օժտված մարդու գաղափարը, առանց որի բանական մարդը չի կարող մտածել ու ներկայանալ որպես բարոյական էակ:

Տաթևացու կարծիքով մարդը ունի իմացական երեք ,աչք՝ զգայարաններ, բանականություն (միտք) և հավատ, որոնց էլ համապատասխանում են իմացության զգայական, բանական և հավատի աստիճանները: Բանականությունը տեսական իմացության հիմքն է, իսկ կամքը՝ գործնական որոշումների:

Իմաստությունն սկսվում է բանականությունից, գործը՝ կամքից, ինչից էլ մարդու մեջ հաստատվում են տեսական ու գործնական կատարյալ առաքինություններ:

Գ) Բարու և չարի հիմնախնդիրը.,Անմեղադրելի է Աստուած, զի մեք ենք պատճառ մեր մեղացսե:

Բարու և չարի հարաբերակցության, չարիքների գոյության հարցերին նա անդրադառնում է ,Գիրք հարց- 71 մանցե և ,Ոսկեփորիկե երկերի առաջին գլուխներում: Աստված ամենայնի արարիչն է, բարեգույն էակ, որը մարդկային բարոյականության սկիզբն ու նպատակն է, օրենքներով ու պատվիրաններով մարդու բարոյական ապրելակերպի կարգավորողը, մարդու փրկության երաշխավորն ու իրականացողը, հանդերձյալ կյանքում հարություն տվողը և չար ու բարի գործերի համար հատուցողը: Տաթևացին նախ ձգտում է ցույց տալ, որ գոյացուցական իմաստով չարը ոչ մի առնչություն չունի Աստծո հետ, որ Աստված և չարը անհամատեղելի են մտածելի բոլոր առումներով: : Եթե բարի է և առնում է չարը, ապա

կիակասեր ինքն իրեն, որովհետև Աստծո մեջ գոյություն չունի ներհակություն: Իսկ եթե չար է և առնում է չարը, ապա էակներից ոչ ոք չի կարող բարի լինել: Ի տարբերություն Աստծո, որը միշտ ու անփոփոխ բարի է, մարդը բնությամբ բարի է, բայց քանի որ նրա հոգին փոփոխական է, ուստի բարին խառն է, այսինքն՝ երբեմն լինում է բարի, երբեմն՝ չար:Նրա կարծիքով չարը ու բարին իրար հետ կապված հակադրություններ են: Առանց չարիքի գոյության չէին լինի շատ բարիքներ, ուստի գրում է Տաթևացին չարիքի գոյությունը անհրաժեշտություն է: Չարն ու բարին, ըստ Տաթևացու, փոխկապակցված երևույթներ են, որոնք գտնվում են ծագումնաբանական ու պատճառահետևանքային կապի մեջ:Իսկապես, գրում է նա, մարդու կամքը ստեղծել է Աստված, բայց ստեղծել է ոչ թե չար, այլ ազատ ու բարի: Սակայն մարդն իր անձնիշխանությամբ հեռացավ բարուց և հակվեց դեպի չարը:Աստված մարդկային կամքի արարողական պատճառն է, իսկ գործած չարիքի ներգործական պատճառը տվյալ մարդու կամքն է: Մարդը իր բնության մեջ ներդրված բարին վերածում է չարի, չափավորը՝ անչափի կամ ագահության, իմացության չափը՝ ճշմարտությունը՝ կեղծիքի, ուստի բոլոր դեպքերում ,անմեղադրելի է Աստուած, զի մեք ենք պատճառ մեր մեղացսե: նա քարոզում է սիրել անձնական թշնամիներին, որովհետև, ըստ նրա, ,թշնամեաց սէրն կատարեալ առաքինութիւն է, որով նմանիմք Աստուծոյե, միևնույն ժամանակ արդարացնում է չար ուժերի՝ սատանայի, բռնակալների, անօրենների, զավթիչների և եկեղեցու թշնամիների դեմ պայքարի անհրաժեշտությունը: Դրանով իսկ Տաթևացին ոչ այնքան ցանկանում է դեմ դուրս գալ հնազանդության մասին քրիստոնեական սկզբունքին, որքան հիմնավորել բարու և ճշմարիտի համար մարդու պայքարի իրավունքը, ազգային հոգևոր դիմագծի պահպանման և հայոց եկեղեցու ինքնուրույնության գաղափարը:

Տաթևացին չարը դիտում է որպես բարու պակասություն:

դ) Տաթևացին համոզված է, որ եթե արդարության սկզբունքը ընկած չէ երկրի (պետության) կառավարման գործում, ապա այդ երկիրը չի կարող կայուն մնալ ու բարգավաճել, առավել ևս պատերազմի ժամանակ չի կարող հաղթել թշնամուն: **Երկիրը շենության ու խաղաղության մեջ պահելու գրավականներից մեկն այն է, որ իշխանը ,զդատաստանն արդարութեամբ և ուղղութեամբ** վարէ, և ո՛չ անիե: **Ուժեղ պետության գոյության երաշխիքը օրենքների, արդարադատության ու իրավունքի վրա հիմնված կառավարումն է, եթե դա տեղի չի ունենում, ապա Աստված հետ է վերցնում իր իսկ տված իշխանությունը.** ,Զի սովորութիւն է Աստուծոյ՝ յորժամ տայ իշխանութիւն ի վերայ ազգաց, եթէ զարդարութիւնէ բուռն հարկանեն. և իրաւամբք վարեն զաշխարհս, բարձրանայ իշխանութիւնն. և օրըստօրէ առաւելանի. և երկիրն ի շինութիւն և ի խաղաղութիւն աճի: Իսկ թէ զանիրաւութիւնէ բուռն հարկանեն, նուազի իշխանութիւն նոցա. և երկիրն խռովի և աւերի: Եւ զբանիս ճշմարտութիւնն՝ տեսցես յիսմայելացւոց ազգս, և ի սեռս մեր: Որ աճեաց և մեծացաւ իշխանոԳրիգոր Տաթևացին, հենվելով աստվածաշնչյան սկզբունքների, վարդապետների ու իմաստասերների մտքերի վրա, արդարության հարցը դիտարկում է տարբեր տեսանկյուններից՝ այն մեկնաբանելով որպես հավասարաբաշխություն, որպես առաքինություն, որպես հատուցում, որպես հակադիր կողմերի միջև համաչափության ու հավասարակշռության ապահովման գործիք, որպես ,ազնվությունե՝ մտածելակերպի ու գործելակերպի սկզբունք, որպես արդարադատություն ու օրենքներով կառավարում:

Արդարություն եզրույթը առնչակցվում է աստվածապաշտություն, ճշմարտություն, իմաստություն, կարգավորվածություն, հավասարության, համաչափություն, ազատություն, օրինապաշտություն, իրավունք, բարի, չար, փրկություն, հատուցում և այլ եզրույթների հետ: Տաթևացին արդարության հարցը քննարկում է հիմնականում իր քարոզգրքերում և ,Գիրք հարցմանցե երկում՝ հենվելով դրա մասին ինչպես Սուրբ գրքի ու եկեղեցու վարդապետների

պատկերացումների, այնպես էլ անտիկ փիլիսոփաների մտքերի և սեփական սոցիալական կենսափորձի տվյալների վրա: Տաթևացու կարծիքով արդարությունը մարդու սոցիալ-բարոյական էությունը բնորոշող հատկություն է, որովհետև միայն մարդուն է ներհատուկ արդարության պահանջմունքը, միայն մարդն է իրարից տարբերակում ինչպես ճշմարիտն ու կեղծը, բարին և չարը, գեղեցիկն ու տգեղը, այնպես էլ արդարն ու անարդարը:

Աստված մարդուն ստեղծել է բարի, արդար, սակայն մարդը պետք է իր կյանքի ընթացքում հոգ տանի, որ դրանք աճեցնի, կատարելագործի և լիարժեք դրսևորի: Խորհրդանշական է, որ Տաթևացին արդարությունը նմանեցնում է սերմի, որն ունի երկու հատկություն՝ մահ և կյանք: Ավելի ստույգ՝ սերմի հատկությունն այն է, որ մեռնելով ծնում է կյանք, և մեկը դարձնում բազում,

ե) Տաթևացին, մարդու գոյության իմաստին և նպատակին աղերսվող հարցերը դիտարկելով արարչագործության, մեղսագործության, Քրիստոսի խաչելության, ապաշխարության, փրկագործության, Քրիստոսի երկրորդ գալուստի, հարության, հանդերձյալ աշխարհում երանելի կեցության և այլ հարցերի շրջանակում, ներկայացնում է մարդու գոյության իմաստավորվածության մասին ավարտուն մի տեսություն: Իմաստավորված կյանքը նախ ենթադրում է մարդու բնակատեղիի՝ երկրի, դրա կառուցվածքի, նշանակության, տարածության ու ժամանակի, ապա՝ նաև մարդու կեցության սկզբի և վախճանի, նրա գոյության իմաստի, նպատակի ու դրան հասնելու ճանապարհների մասին հստակ պատկերացումներ:

Հոգու և մարմնի միջև ընթացող պատերազմը ընտրություն է երանելի կյանքի համար: Քանի որ երկրային կյանքը անցողիկ է և լոկ նախապատրաստություն՝ երկնային աշխարհ մուտք գործելու համար, ուստի, ըստ Տաթևացու՝ այդ կարճատև ժամանակը մարդը չպետք է իզուր անցկացնի: Մարդուն հնարավորություն է տրված այստեղ կորցնելու կամ շահելու այն ավանդները, որոնք հանդերձյալ աշխարհում պետք է բախտորոշ լինեն նրա համար: Հետևաբար նա չպետք է երկրային ժամանակը զուր վատնի և ունայն ու անիմաստ ապրի, այլ պետք է գիտակցի, որ ,այս ժամանակ է վաճառելոյ. որ զմարմնաւորն տամք և ըզհոգևորն գնեմք. զանցաւորս տամք և զանանցն առնումԲնության կարգն է, գրում է Տաթևացին, նախ գործել, հետո՝ հանգստանալ, նմանապես, երկրային կյանքում մարդը պետք է հանապազ գործի, որպեսզի երկնային կյանքում հանգստանա: Մարդը այստեղ պետք է վաստակի, շարունակում է Տաթևացին, որովհետև ,անդ ոչ վաստակի, զի չէ մարմնաւոր կեանքե, կամ ,որ ինչ հնար կայ ի ժամանակս յայս ապրելոյ՝ անդ փակեալ էե: Այս չափանիշնե- 235 Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, էջ 127: 236 Նույն տեղում, էջ 448: 158 րից ելնելով՝ Տաթևացին դատապարտում է անգործությունը, ծուլությունը, պարապությունը, դրանք համարում մարդկային արատների և մեղքերի աղբյուր:

Մարդու բարոյական կատարելագործումը Տաթևացին կապում է կրթության ու դաստիարակության, առաքինությունների ձեռքբերման, բարոյականության ավանդական կանոններին, ազգային կրոնական սովորույթներին հետևելու և աշխատանքային գործունեության հետ: Մարդու երկրային ու երկնային կյանքի իմաստավորման համատեքստում էական են դառնում մահվան ու անմահության, փրկության ու հարության մասին պատկերացումները:

Եթե մահը փրկություն է, ապա նշանակում է, որ դա ավելի մեծ արժեք ունի քրիստոնյայի համար, քան այս կյանքը: Ծնվելով մարդը մեռնում է, իսկ մեռնելով՝ ապրում. ,Ծնունդն ի մահ բերէ զմեզ,– գրում է Տաթևացին,– իսկ մահն ի կեանս..., ապա ոչ է պարտ ասել մահ. այլ փոխումն մահու ի կեանս. ի խավարէ ի լոյս. ի մեղաց յարդարութիւնե

ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ ԵՎ ԱՍՈՒՅԹՆԵՐ (2009թ.)

Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ մեծ թիվ են կազմում թևավոր խոսքերը և ասույթները: Տաթևացին հաճախ դիմել է սրանց՝ խոսքը գեղեցիկ, հեշտալուր և, որ ամենակարևորն է՝ ասվածը տպավորիչ և մտապահվող դարձնելու համար:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ (2015թ.)

Շուրջ յոթանասուն տարի առաջ՝ 1946 թվականին, հրատարակվել է չափազանց ուշագրավ մի աշխատություն՝ ,Л.А. Оганесян, История медицины в Армениие, часть вторая, Ер. 1946, որտեղ անդրադարձ կա նաև Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքներին: Մի քանի էջում գիտական պատշաճ մակարդակով հեղինակը ներկայացնում է Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ տեղ գտած բժշկագիտական հայացքները, և միայն զարմանալ կարելի է, որ մինչև այժմ այդ թեմայով չի գրվել մասնագիտական մենագրություն:

Մեր կողմից Գրիգոր Տաթևացու միայն ,Գիրք հարցմանցե--ից առանձնացված բժշկագիտական հարցադրումները և վերլուծությունները գերազանցում են մի քանի տասնյակ էջերը, այսինքն՝ Տաթևացու գրական ժառանգության մեջ տեղ գտած մնացած բժշկագիտական հարցադրումները ի մի բերելու, այլ միջնադարյան հեղինակների հետ համեմատելու դեպքում հաստատապես կարելի է խոսել Գրիգոր Տաթևացու համակարգված բժշկագիտական հայացքների մասին:

12. Գրիգոր Տաթևացին նաև մանրանկարիչ և երաժիշտ: Նա և՛ երաժիշտ էր, և՛ աստվածաբան, և՛ փիլիսոփա, և՛ եկեղեցական գործիչ:

Պահպանված է 1297թ. գրված մի Ավետարան ,որ 1378-ին նկարազարդել է Տաթևացին: Համալսարանում երաժշտության դասեր էր տալիս: Տաթևացին հանրագիտակ վարդապետներից է. գրել է գրքեր գխագրության,գրչության,կենսաբանության, քերականության, արվեստի մեկնության, աստվածաբանության, դավանաբանության,քարոզների, իր ժամանակի գրեթե բոլոր գիտությունների մասին:Աստվածաբան, բանասեր,մանկավարժ Տաթևացին հավաքել,սինթեզի է ենթարկել իրենից առաջ եղած բոլոր գրվածքները և փոխանցել սերունդներին: Հայկական միջնադարյան գիտական մտքի զարգացման գործում հսկայական դեր կատարած այս համալսարանին էլ նա նվիրեց իր ողջ կյանքը: Նրա մահից հետո Տաթևի համալսարանը,

ցավոք, երկար չգոյատևեց, բայց նրա բազմաթիվ աշակերտները Հայաստանի տարբեր մասերում պահպանեցին Տաթևացու ավանդույթները:

Այսօր Տաթևի վանական համալիրը մեր երկրի ամենասիրված վայրերից մեկն է, զբոսաշրջության վայր: Այստեղ են գալիս՝ հիանալու ճարտարապետական կոթողով, տեսնելու սուրբ Գրիգոր Տաթևացու դամբարանը և խոնարհվելու: Հայ առաքելական եկեղեցին Տաթևացուն դասել է սրբերի շարքը: Նրա հիշատակը տոնվում է Մեծ պահքի 4-րդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը: